

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

24.01.2015

Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

Հրավիրված էին մասնաճյուղի ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, գիտքարտուղար Մ.Աթոյանը, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի 2014թ. գործունեության հաշվետվություն /Զեկ. Ս. Ալեքսանյան/
2. 2014-2015 ուստարվա առաջին քննաշրջանի ամփոփում /Զեկ. Վ. Ալեքսանյան/
3. 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը /Զեկ. Ս. Առաքելյան/

ԼՄԵՅԻՆ՝ օրակարգի առաջին կետի վերաբերյալ Վ. Ալեքսանյանը հանգամանալից ներկայացրեց 2014թ. գործունեության հաշվետվություն: Նա ներկայացրեց ֆակուլտետում առկա չորս ամբիոնների՝ Հայոց պատմության և հասարակագիտության, Հայոց լեզվի և գրականության, Մանկավարժության և հոգեբանության, Օտար լեզուների ամբիոնների կատարած աշխատանքները:

Ներկայումս ֆակուլտետում սովորում է 268 ուսանող, որոնցից 60-ը պետպատվերով, 208-ը՝ վճարովի:

Պատմություն մասնագիտությամբ սովորում է 70 ուսանող, ՊՊ՝ 16, վճարովի՝ 54:

Հայոց լեզու և գրականություն՝ 50 ուսանող, ՊՊ՝ 13, վճարովի՝ 37:

Մանկավարժություն և հոգեբանություն՝ 40 ուսանող, ՊՊ՝ 11, վճարովի՝ 29:

Ֆրանսերեն լեզու և գրականություն՝ 33 ուսանող, ՊՊ՝ 9, վճարովի՝ 24:

Անգլերեն լեզու և գրականություն՝ 75 ուսանող, ՊՊ՝ 11, վճարովի՝ 64:

Ֆակուլտետի «Պատմություն» մասնագիտությունում 2014-2015թթ. վերականգնվել են նախորդ տարիներին դուրս մնացած և բանակից վերադարձած 8 ուսանող:

2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի ֆակուլտետի վճարովի ուսանողների վարձավճարը կազմում է 46, 275 000 դրամ, որից հավաքագրել ենք 45, 725 000 դրամ: Ֆակուլտետի 16 ուսանող 2014թ. առաջին կիսամյակում օգտվել է ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցումից: Եվս 16 առաջադիմող ուսանողի

ուսման վարձավճար մասնակի փոխհատուցվել է ՀՀ ԿԳ նախարարության, Vivacell, Orange հիմնադրամների կողմից:

Ֆակուլտետում թափանցիկ են իրականացվում յուրաքանչյուր կիսամյակ կրթաթոշակների նշանակման և տարին մեկ անգամ իրականացվող փոխատեղման գործընթացները:

Ֆակուլտետում ներդրված է ուսանողների հաճախումների համակարգչային ամփոփման ծրագիր, որը հնարավորություն է տալիս ամեն ամիս կանոնավոր ամփոփել ուսանողների հաճախումները և գործող կարգապահական կանոնակարգի համաձայն ձեռնարկել համապատասխան քայլեր /դիտողություն, գրավոր նկատողություն և այլն/:

Ֆակուլտետի ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման և ուսանողների կարգապահությունը բարձրացնելուն ծառայող օղակներից է կուրսղեկության ինստիտուտը: Յուրաքանչյուր մասնագիտության գծով նշանակված է կուրսղեկ: Կուրսղեկը ունի դեկանատի կողմից հաստատված աշխատանքային պլան և ժամանակացույց:

Վ. Ալեքսանյանը մատնանշեց, որ հիմնական աշխատողի կարգավիճակ ունեցող դասախոսները տարեցտարի առաջընթաց են արձանագրում գիտական և հետազոտական գործունեության ասպարեզում: Մա նշանակում է, որ ուշադրություն է դարձվում գիտական մակարդակի վրա:

Ֆակուլտետը պարբերաբար համալրվում է տեխնիկական միջոցներով հազեցած լսարաններով, կաբինետներով և օրեցօր ավելանում է տեխնիկական միջոցների կիրառմամբ դասերը վարող դասախոսների թիվը:

Վ. Ալեքսանյանը առանձնացրեց կրթության որակի բարձրացմանը նպաստող մի գործոն ևս. ուսանողության շրջանում պարբերաբար իրականացվող հարցումները, որի նպատակն է բացասականը վերհանելու, վերացնելու, դրականն ու առաջադիմականը խթանելու: Մակայն ֆակուլտետում հարցումների արդյունքները վերլուծության և բազմակողմանի քննարկումների չեն ենթարկվում: Բուհերում այսօր մեծ դեր է վերապահված ուսանողական ինքնակառավարման մարմիններին, որոնք կոչված են լիարժեք դարձնելու ուսումնառությունը, նպաստելու անհրաժեշտ և խորը գիտելիքների ձեռքբերմանը, ինչպես նաև հարստացնելու ուսանողների առօրյան: Ֆակուլտետում գործում են ՈԻԽ և ՈԻԳԸ, որոնք հաճախակի կազմակերպում են գիտական միջոցառումներ, ինտելեկտուալ խաղեր, նշանավոր մարդկանց նվիրված հորելյանական միջոցառումներ: 2014թ. նոյեմբերին կազմակերպված մասնաճյուղի ինտելեկտուալ խաղում հաղթեց Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության թիմը: Գործում են մասնագիտական ակումբներ:

Վ. Ալեքսանյանը հարկ համարեց նշել, որ ֆակուլտետում աշխատանքները կատարվում են բոլոր աշխատակիցների մասնակցությամբ, որոնցից յուրաքանչյուրը պատասխանատվությամբ է կատարում իր գործը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ պ.գ.թ., դոցենտ Ս. Առաքելյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, պ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետում 2014թ. կատարված աշխատանքները գնահատել բավարար:

ՀՄԵՑԻՆ՝ Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցողը ներկայացրեց, որ քննաշրջանը նախապատրաստվել և կազմակերպվել է պատշաճ մակարդակով: Նախապես ուսանողներին ներկայացվել է քննաշրջանի ժամանակացույցը, բոլոր կուրսերում մանրամասն բացատրվել է քննությունների և ստուգաքննների կազմակերպման կարգը, լուսաբանվել է գիտելիքների գնահատման կարգը: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց 2014-2015 ուստարվա առաջին քննաշրջանի արդյունքները: Քննական գործընթացներին մասնակցել է ֆակուլտետում սովորող 260 ուսանող:

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությունում՝ 75, Պատմություն մասնագիտությունում՝ 62, Հայոց լեզու և գրականություն մասնագիտությունում՝ 50, Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտությունում՝ 40, Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտությունում՝ 33 ուսանող: Պետք է արձանագրել, որ արդյունքները միջինից բարձր էին: Մասնավորապես կային առարկաներ, որոնց ընթացիկ քննությունից ուսանողների մոտավորապես 90%-ը և ավելին ստացել են առավելագույն միավորներ: Դա նկատելի էր հատկապես «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության ուսանողների մոտ: Զեկուցողը մանրամասն ներկայացրեց առաջին քննաշրջանից հետո ֆակուլտետում արձանագրված ակադեմիական պատկերը:

«Պատմություն» մասնագիտության բացարձակ առաջադիմությունը կազմել է 77.42 %:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության բացարձակ առաջադիմությունը կազմել է 68.00 %:

«Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության բացարձակ առաջադիմությունը կազմել է 97.50 %:

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության բացարձակ առաջադիմությունը կազմել է 74.67 %:

«Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության բացարձակ առաջադիմությունը կազմել է 75.76 %:

2014-2015 ուստարվա առաջին քննաշրջանի արդյունքներով ֆակուլտետի բացարձակ առաջադիմությունը կազմել է 77.69 %:

Բուհական համակարգում կատարվող գործընթացները, փոփոխություններն ու նորամուծությունները իրենց արտացոլումն են գտել նաև Հումանիտար գիտությունների ֆակուլտետում ուսուցանվող մասնագիտություններում: Իրականացվում են գործընթացներ, որոնք հետապնդում են կրթության որակի բարձրացման նպատակ:

Առաջին հերթին հարկ է նշել ֆակուլտետում գործող բաց, հրապարակային գործելակերպը: Դեկանատի աշխատանքները կազմակերպված են այնպես, որ

ուսանողների վերաբերյալ հրապարակման ենթակա տվյալները, մասնավորապես ակադեմիական առաջադիմությունը, լինի մատչելի և հասանելի ոչ միայն ուսանողների, այլև ողջ հանրության համար: Քննաշրջանի ընթացքում յուրաքանչյուր օրվա արդյունքները հրապարակվում են մասնաճյուղի կայքում և փակցվում ֆակուլտետի հայտարարությունների տախտակին: Վերահսկման այս համակարգի ներդրումը ակնառու դրական է անդրադարձել ուսման առաջադիմության և կրթության որակի վրա: Ավելին՝ այն լուրջ լծակ է կոռուպցիոն դրսևորումները կանխելու համար:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ պ.գ.թ., դոցենտ Ս. Առաքելյանը, Ա. Դավթյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, պ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Հասանյանը:*

*ՈՐՈՇԵՑԻՆ՝ 2014-2015 ուստարվա առաջին քննաշրջանի կազմակերպման աշխատանքները և արդյունքները գնահատել բավարար:*

*ՀՄԵՑԻՆ՝* օրակարգի երրորդ հարցի՝ 2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների վիճակի մասին խոսեց Ս. Առաքելյանը: Զեկուցողը հատկապես կարևորեց առարկայական փաթեթների /portfolio/ պատրաստման հարցը: Նախապատրաստական խնդիրներից համարվեց քննական հարցաշարերի տեղադրումը մասնաճյուղի կայքում: Ըստ մասնագիտությունների պետք է տեղադրվեն 1-ին, 2-րդ և հանրագումարային քննությունների հարցաշարերը: Հարցաշարերը պետք է ներառեն տրամաբանական խնդիրներ, մասնագիտական գրականության իմացությունը ստուգող հարցեր: Ս. Առաքելյանը հայտարարեց, որ Երևանից հրավիրված մասնագետներին պետք է կցվեն տեղացի դասախոսներ, որպեսզի փորձի փոխանակում կատարվի:

*ՈՐՈՇԵՑԻՆ՝ 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:*

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Վ. Ալեքսանյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. Ղևոնդյան